

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՇԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Օգոստոսի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Օգոստոսի երկրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում ցածր է եղել նորմայից մինչև 1 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 20-ին. Տավուշում գրանցվել է +28...+31°C (Բազրափաշեն՝ +34°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +34...+36°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +33...+35°C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28°C, Շիրակում՝ +28...+33°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +26...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34°C, Գեղարքունիքում՝ +22...+27°C, Լոռիում՝ +26...+30°C, Արմավիրում, Արարատում՝ +36...+37°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +31...+36°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 17-ին. Տավուշում գրանցվել է +9...+14°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +14...+19°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Շիրակում՝ +7...+9°C (Աշոց՝ +3°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +7...+9°C (Հանքավան՝ +3°C), նախալեռնային շրջաններում՝ +13...+15°C, Գեղարքունիքում՝ +7...+11°C (Գավառ՝ +4°C), Լոռիում՝ +6...+11°C (Տաշիր՝ +4°C), Արմավիրում, Արարատում՝ +16...+18°C (Արմավիր՝ +10°C), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +1...+5°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+16°C:

Տասնօրյակային տեղումներ












Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 3-4մմ (19-34%), Լոռիում՝ 1-5մմ (6-28%), Տավուշում՝ (Դիլիջան 1մմ-8%), 19-70մմ (106-219%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 5-9մմ (36-41%), նախալեռներում՝ 1-8մմ (17-258%), Գեղարքունիքում՝ 1-13մմ (8-149%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 2-8մմ (21-106%), նախալեռնային շրջաններում՝ 2մմ (53%), Արմավիրում՝ 1-2մմ (40-80%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 9մմ (143%), նախալեռնային շրջաններում՝ 5մմ (167%), Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 4-35մմ (93-438%), հովտային շրջաններում՝ (Կապան 12մմ-300%): Արարատում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են օգոստոսի 17-ին. լեռնային շրջաններում՝ +5...+9°C, որոշ լեռնային շրջաններում՝ +1...+4°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +14...+16°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հասունացումը և բերքահավաքը:

Առանձին լեռնային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ սկսվել է աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է բանջարանոցային մշակաբույսերի, պտղատուների և խաղողի հասունացումը, կտրարվել է բերքահավաք:

Հովտային շրջաններում կտրարվել է ձմերուկի և սեխի բերքահավաք, առաջացել են առվույտի ծաղկաբույլերը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պտղատուների հասունացման, շաքարանյութի կուտակման և մասսայական բերքահավաքի համար:



